ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 6

15.07.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2021/3Շ կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի

ք. Երևան « 16 » « 12 » **2022թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ոսմար» ՍՊԸ և «Արարատ Ճանշին» ՍՊԸ կոնսորցիումը ի դեմս «Ոսմար» ՍՊԸ տնօրեն Գ. Հակոբյանի, որը գործում է ՈՈ/Ա-ՀԳ/2021 (այսուհետ՝ Կապալառու) համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 15.07.2021թ. կնքված N **ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2021/3Շ** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Պայմանագրի համաձայն կապալառուն պարտավորվել է իրականացնել Հ Հ-46, /Մ-2/-Տաթև-Աղվանի-/Մ-2/(Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ37+500-կմ55+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքները:

Նշված ճանապարհի հիմնանորոգման համար նախատեսված միաշերտ ա/բետոնե պատվածքի իրականացմամբ վերանորոգված հատվածների միջին ԱՄՑ արժեքը՝ հաշվարկված յուրաքանչյուր 100մ միջինացված արժեքների հիման վրա, չպետք է գերազանցի 3.5 մմ/մ-ը, իսկ երկշերտ ա/բետոնե պատվածքի իրականացմամբ վերանորոգված հատվածների միջին ԱՄՑ արժեքը՝ հաշվարկված յուրաքանչյուր 100մ միջինացված արժեքների հիման վրա, չպետք է գերազանցի 2.5 մմ/մ-ը: Երկշերտ ա/բետոնե պատվածքի յուրաքանչյուր 100մ երկարությամբ հատվածի ընդունումը, որտեղ ԱՄՑ արժեքը 1.0մմ/մ չափով գերազանցում է 2.5 մմ/մ արժեքը, պետք է մերժվի: Թույլատրված 2.5մմ/մ ԱՄՑ արժեքը գերազանցող յուրաքանչյուր 0.1 մմ/մ-ի չափով աճի համար ծածկի վերին շերտի գինն (Կապալառուի կողմից առաջարկված միավոր գինը) ՝ նվազեցվում է 1%-ով յուրաքանչյուր ստուգված 100մ-ի համար: Միաշերտ ա/բետոնե պատվածքի յուրաքանչյուր 100մ երկարությամբ հատվածի ընդունումը, որտեղ ԱՄՑ արժեքը 1.0մմ/մ չափով գերազանցում, է 3.5 մմ/մ արժեքը պետք է մերժվի: Թույլատրված 3.5մմ/մ ԱՄՑ արժեքը գերազանցող յուրաքանչյուր 0.1 մմ/մ-ի չափով աճի համար ծածկի վերին շերտի գինը (Կապալառուի կողմից առաջարկված միավոր գինը) նվազեցվում է 1%-ով՝ յուրաքանչյուր ստուգված 100մ-ի համար: Առավելագույն նվազեցումը պետք է կազմի 10 %:

Ըստ փորձարկման արդյունքների, տվյալ ճանապարհահատվածի 100մ երկարությամբ առանձին հատվածներում հաշվարկված ԱՄՑ միջին արժեքը միաշերտ ա/բետոնե պատվածքի դեպքում կազմել է 2.75 մմ/մ:

Հաշվի առնելով այն, որ չի պահպանվել վերը նշված տեխնիկական պահանջով սահմանված ցուցանիշը, ուստի այդ ցուցանիշին համապատասխան հարաբերակցությամբ նվազեցվել է նշված ճանապարհահատվածում տաք մանրահատիկ ա/բետոն h=4սմ տեղադրման աշխատանքի համար Կապալառուի կողմից առաջարկված միավոր գինը, ինչի արդյունքում անհրաժեշտ է նվազեցնել նաև Պայմանագրի ընդհանուր գինը:

Հիմք ընդունելով վերոգրյալը կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի ընդհանուր գինը նվազեցնել **1 040 845** (մեկ միլիոն քառասուն հազար ութ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամի չափով, ներառյալ՝ ԱԱՀ-ն և Պայմանագրի 5-րդ կետի 5.1 ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

5.1 «Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **2 706 460 434** (երկու միլիարդ յոթ հարյուր վեց միլիոն չորս հարյուր վաթսուն հազար չորս հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, որից **451 076 739** (չորս հարյուր հիսունմեկ միլիոն յոթանասունվեց հազար յոթ հարյուր երեսունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2022թ. իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է **930 767 214** (ինը հարյուր երեսուն միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր տասնչորս) ՀՀ դրամ, որից **155 127 869** (հարյուր հիսունհինգ միլիոն հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր վաթսունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը»:

1.2 Հաստատել Համաձայնագրի նոր 2022թ. Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելված 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Համաձայնագրի պայմանները կիրառվում եմ պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը՝ կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրր կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ոսմար» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ,Սյունիքի մարզ, ք.Գորիս, Երևանյան խճ 17, 17/1
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 900011025823	ՀՀ 220613330103000
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 09208107
գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ա. Երիցյան	Գ. Հակոբյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2021/3Շ գնման պայմանագրի
«16» «12» 2022 թ. կնքված
Թիվ 6 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ-46, /Մ-2/-Տաթև-Աղվանի-/Մ-2/(Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ37+500-կմ55+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	45231177/96	Ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	—	—	—	—	—	—	—	930 767 214	930 767 214	930 767 214	930 767 214	930 767 214	**930 767 214**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ոսմար» ՍՊԸ
ՀՀ,Սյունիքի մարզ, ք.Գորիս, Երևանյան խճ
17, 17/1
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 220613330103000
ՀՎՀՀ 09208107
Տնօրեն
Գ. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ